

Էսաց.—Չինք պաշտը, մինք Աստուած կ'պաշտինք:

Էսաց.—Որ տիւ տանէք իմ քիւրիր, մե չ'աստուածքիր կ'կեան,
Քոիւ կ'էնին, ձի մօտէն կ'խլին:

Էլաւ, իտու:

Էլաւ, զքեառսուն աղջիկ առին, Էկան Հագրբեջանայ:

Էդա միծ աղջիկ, ինչ մարդիւ շիւր կէր վերայ, Էլաւ ճամբսու
փոխ, դարձաւ մատ կռքիր, Էսաց.—Վռքիր, մարդիր աղջկնիր փախ-
ցըցին, կերէք՝ դարձըցէք, բերէք:

Վռքիրուց ձէն Էլաւ, բեռացին, ասին.—Աստուածապաշտ
մարդիր չ'աստուածապաշտ մարդիրու աղջկնիր տարան:

Քեաղաք բիրադի ձիաւորուան, թրիր քեաշիցին, ինկեան յի-
տիւնիր:

Դաւիթ ուր քեառսուն մարդով, քեառսուն աղջկնով Էկան,
մատ խալաւիւր նստած ին, կ'ուտին, կ'խմին, քէֆ կ'էնին:

Դաւիթ ի՞նչ կ'էնը,—Էրկրքիր կ'կեսը:

Էրաւ քեառսուն փայ, Էտու Էնունց, ամէն մէկու մէկ Էրկիր
մէկ աղջիկ: Ճամբսից՝ յամէն մէկ կինաց Էրկիր, ինչ Դաւիթ նշա-
նակիր էր:

Դաւիթ մնաց Էնդեղ մընակ: Մէկ Էլ տեսաւ՝ քեաղքի միծ
ու պղտիկ, որ ինչ կերէր թուր վերուցէր, բիրադի Էկան, Դաւթը
չուրս պիւլիւր բռնիցին:

Դաւիթ Էլաւ, զձին խեծաւ, ինկաւ յիտիւքիր. ինկաւ յի-
տիւքիր, քիշից, որ սպանից, որ փախըցուց, տարաւ, իցկից ծովիր,—
մէկ չ'պրծաւ:

Դարձաւ, կինաց Հագրբեջան, կան Էկաւ, իրիշկից, տեսաւ, ոմ
մէկ աղջիկ կայ Էդա տեղ, Էն աղջկան պէս Էլ աղջիկ խորոտ¹⁾
չ'կայ. տիւ չ'ըսիս, Էն թագաւորը աղջկն ի, ինչ մարդու շիւր
էր խագի, Էն մէկէլքիր Էնու կարաւաւքիրն²⁾ ին:

¹⁾ Գեղեցիկ: ²⁾ Աղախին: